ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/6-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

_____ Սիմոն Բաբայան

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ, ՀԱՎԱԿՆՈՐԴԻ, ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՔ ՎՃԱՐԵԼՈՒ

Կ Ա Ր Գ

ք. Երևան, 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի դրույթներով կարգավորվում են ՀՀ փաստաբանների անդամավճարների, փաստաբանի հավակնորդների, փաստաբանի օգնականի մուտքի և/կամ այլ վճարների չափի, դրանց վճարման, ինչպես նաև փաստաբանի անդամավճարի արտոնությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի դրույթների գործողությունը տարածվում է ՀՀ փաստաբանների, Պալատի կողմից հավատարմագրված այլ պետության փաստաբանների, փաստաբանի հավակնորդների, փաստաբանի օգնականների նկատմամբ:

3. Սույն կարգով նախատեսված վճարումները կատարվում են կանխիկ (Պալատի դրամարկղ) կամ անկանխիկ (բանկային կամ վճարային այլ համակարգով):

4. Սույն կարգում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

– ***Պալատ*** - Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ.

– ***հավակնորդ*** - Պալատի որակավորման հանձնաժողովի կողմից վկայագիր ստացած իրավաբան.

– ***օգնական*** - փաստաբանի օգնական.

– ***դիմում*** - փաստաբանի կամ փաստաբանի օգնականի կողմից սույն կարգով նախատեսված արտոնությունից օգտվելու կամ այլ հարցի համար Պալատին առձեռն, փոստային ծառայության կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված և դիմողի կողմից ստորագրված փաստաթուղթ, որում հստակ կերպով արտացոլվում է դիմողի պահանջը.

– ***շահառու փաստաբան*** - *անդամավճարի արտոնությունից օգտվող փաստաբանը.*

– ***ծննդյան փաստաթուղթ*** - երեխայի անձնագիր կամ ծննդյան փաստը հաստատող այլ ապացույց:

II. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ, ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ, ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

5. Փաստաբանի ամսական անդամավճարի չափը կազմում է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ՝ բացառությամբ Պալատի կանոնադրությամբ և սույն կարգով նախատեսված դեպքերի:

6. Երևան քաղաքից առնվազն 120 (հարյուր քսան) կիլոմետր հեռավորության վրա գտնվող բնակավայրում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի ամսական անդամավճարի չափը կազմում է 4.500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ Պալատին գրավոր դիմելու պահից, պայմանով, որ փաստաբանն անդամավճարի պարտք չունի:

7. Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի անդամավճարի չափը

կազմում է 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ Պալատին գրավոր դիմելու պահից:

8. Փաստաբանի հավակնորդի մուտքի վճարը կազմում է 150.000 (հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, բացառությամբ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամն ավարտած հավակնորդի, որի մուտքի վճարը կազմում է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

9. Փաստաբանի օգնականի մուտքի վճարը կազմում է 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքի:

10. Փաստաբանի օգնականի ամենամսյա վճարը կազմում է 1.000 (հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքի:

11. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի ունկնդրի կարգավիճակ ունեցող փաստաբանի օգնականն ազատվում է մուտքի վճար վճարելու պարտականությունից, ինչպես նաև ամենամսյա վճարից՝ ունկնդրի կարգավիճակ ունենալու ժամանակահատվածի համար:

III. ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Փաստաբանի հավակնորդը մուտքի վճար վճարելու պարտականություն է ձեռք բերում՝ փաստաբանի արտոնագիր ստանալու դիմումը ներկայացնելու պահից մինչև իր հարցի օրակարգով հրավիրված Պալատի խորհրդի նիստի օրվան նախորդող օրը, բացառությամբ սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքի: Պալատի խորհրդի կողմից հավակնորդի՝ փաստաբանի արտոնագիր ստանալու մասին դիմումը մերժելու դեպքում կատարված մուտքի վճարը տասնօրյա ժամկետում վերադարձվում է հավակնորդին՝ դիմումում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով:

13. Այն դեպքում, երբ փաստաբանի հավակնորդը հնարավորություն չունի միանվագ վճարելու Պալատի խորհրդի կողմից սահմանած մուտքի վճարը, ապա կարող է պատճառաբանված միջնորդություն ներկայացնել Պալատի խորհրդին՝ մուտքի վճարը տարաժամկետելու վերաբերյալ: Կախված փաստաբանի հավակնորդի միջնորդության հիմնավորվածությունից և փաստաբանի հավակնորդի գույքային դրության վերաբերյալ կցված ապացույցներից՝ Պալատի խորհուրդը կարող է մինչև վեց ամսով տարաժամկետել մուտքի վճար վճարելու պարտականությունը, այդ թվում՝ տարաժամկետված մասով գումարները համամասնորեն միացնել փաստաբանի հավակնորդի կողմից ապագայում վճարվող ամսական անդամավճարներին: Սույն կետում նշված դեպքում Պալատի և փաստաբանի հավակնորդի միջև կնքվում է համապատասխան համաձայնագիր, որում սահմանվում է մուտքի վճարի տարաժամկետման գրաֆիկը, ինչպես նաև հետևյալ պայմանն առ այն, որ փաստաբանի հավակնորդի կողմից Պալատ կատարվող այլ վճարումներով (անկախ փոխանցման/վճարման նպատակից) առաջնահերթ մարվելու են ժամկետանց մուտքի վճարները:

IV. ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՄԱՍՈՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15 (տասնհինգը):

15. Առաջին անդամավճարի վճարման պարտականությունը փաստաբանի մոտ ծագում է Պալատի խորհրդի՝ Պալատի կազմում անդամագրելու և փաստաբանական գործունեության արտոնագիր տրամադրելու որոշման ընդունման օրվանից, բացառությամբ Կարգի 16-րդ կետում նշված դեպքերի: Փաստաբանի անդամավճարը վճարելու պարտավորությունը լրիվ կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում առաջին հերթին մարվում է փաստաբանի համար ավելի վաղ ժամկետում առաջացած անդամավճարի պարտավորությունը՝ անկախ վճարման փաստաթղթում նշված նպատակից: Փաստաբանի անդամավճարի ժամկետանց պարտքի գումարը ինքնաշխատ ձևով միացվում է փաստաբանի անդամավճարի հերթական պարտքի գումարին և ենթակա է վճարման հերթական անդամավճարը վճարելու ժամկետում:

16. Այն դեպքում, երբ փաստաբանի մոտ առաջ է գալիս ոչ լրիվ ամսվա համար վճարելու հարց (կապված արտոնագիր տրամադրելու, արտոնագրի գործողությունը կասեցնելու, դադարեցնելու կամ վերսկսելու, ինչպես նաև անդամավճարներ վճարելուց լրիվ կամ մասնակի ազատելու հետ), ապա համապատասխան ոչ լրիվ ամսվա համար վճարումը կատարվում է տվյալ ամսվա ընթացքում արտոնագրի գործողության՝

- 1-ից 6 օրերի համար՝ ամսական անդամավճարի 1/5-րդի,
- 7-ից 12 օրերի համար՝ ամսական անդամավճարի 2/5-րդի,
- 13-ից 18 օրերի համար՝ ամսական անդամավճարի 3/5-րդի,
- 19-ից 24 օրերի համար՝ ամսական անդամավճարի 4/5-րդի,
- 25-ից ավելի օրերի համար՝ անդամավճարի լրիվ չափով:

17. Այն դեպքում, երբ փաստաբանի հետ կնքվել է մուտքավճարի կամ անդամավճարի տարաժամկետ վճարման համաձայնագիր, ապա փաստաբանը պետք է վճարումը կատարի համաձայնագրում նշված ժամկետում և կարգով: Նշված համաձայնագրով նախատեսված հերթական գումարի (այդ թվում՝ անդամավճարի մի մասի) վճարումը 5 (հինգ) օրից ավել կետանցելը (ուշացնելը) համարվելու է անդամավճարի վճարման պարտականության խախտում:

Անդամավճարի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող պարտքի տարաժամկետ վճարման համաձայնագիրը Պալատի ֆինանսական տնօրենը կնքում է Պալատի խորհրդի համաձայնության դեպքում:

18. Այն դեպքում, երբ փաստաբանը Պալատի ներքին իրավական ակտով սահմանված կարգով ազատված է անդամավճար վճարելուց կամ վերջինիս փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դադարել է և անդամավճար վճարելուց ազատման կամ արտոնագրի գործողության դադարման օրվա դրությամբ փաստաբանն ունի անդամավճարի անհուսալի դեբիտորական

կետանցված պարտավորություն, ապա Պալատն իրավասու է օրենքով սահմանված կարգով փաստաբանի անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրել՝ կետանցված դառնալու 366-րդ օրվանից: Սույն կետով նախատեսված հիմքով անհուսալի դեբիտորական պարտավորությունը (պարտքը) դուրս գրելու մասին որոշում է կայացնում Պալատի խորհուրդը:

19. Անդամավճարի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը գերազանցող պարտք ունեցող փաստաբանների դեմ կարող են նշված պարտքի գումարները դատական կարգով բռնագանձելու վերաբերյալ հայցադիմումներ կամ վճարման կարգադրության դիմումներ ներկայացվել Պալատի խորհրդի համաձայնությամբ: Անդամավճարի 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը չգերազանցող պարտքի դեպքում փաստաբանի դեմ պարտքի բռնագանձման հայցադիմում չի ներկայացվում:

20. Փաստաբանը անդամավճար վճարելու պարտավորությունից ամբողջությամբ ազատվում է Պալատի կանոնադրությանը և սույն կարգին համապատասխան՝ հետևյալ դեպքերում.

1) առաջին կարգի հաշմանդամություն ունենալու դեպքում.

2) ծանր հիվանդություն դեպքում՝ հիվանդության տևողության ժամանակահատվածով.

3) պատերազմում զինվորական ծառայության կամ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված (մահացած), անհետ կորած կամ գերեվարված զինծառայող (կամավոր) ծնող, ամուսին կամ զավակ ունենալու դեպքում՝ Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով .

4) ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով զորահավաքի և ռազմական գործողություններին մասնակցելու դեպքում՝ ռազմական գործողությունների ժամանակահատվածով .

5) ռազմական դրության պայմաններում անմիջականորեն ռազմական գործողությունների իրականացման վայրում մշտապես բնակվելու (հաշվառված լինելու) դեպքում՝ Փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով .

6) 70 (յոթանասուն) տարին լրացած լինելու դեպքում.

7) հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի մեկ տարեկանը լրանալու դեպքում.

8) փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ՝ Խորհրդի առանձին որոշմամբ անդամավճարի արտոնություններ սահմանելու դեպքում:

21. Անդամավճար վճարելու պարտավորությունից ամբողջությամբ ազատելու, ինչպես նաև անդամավճար վճարելու պարտավորությունից մասնակի ազատելու առանձնահատկությունները կարգավորվում են նաև սույն կարգի առանձին դրույթներով:

22. Փաստաբանի կամ օգնականի կողմից փաստացի գործունեություն չիրականացնելը չի կարող հիմք հանդիսանալ ամենամսյա վճարների վճարումից

ազատելու համար: Փաստաբանի կամ օգնականի արտոնագիրը դադարեցնելու դեպքում նախկինում կատարված վճարումները վերադարձման ենթակա չեն:

V. ՕԳՆԱԿԱՆԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Փաստաբանի օգնականի կարգավիճակի հավակնող անձը մուտքի վճարը կատարում է նախքան Պալատի խորհրդին արտոնագրման մասին դիմում ներկայացնելը: Պալատի խորհրդի կողմից օգնականի՝ արտոնագրման դիմումը մերժելու դեպքում կատարված մուտքի վճարը տասնօրյա ժամկետում վերադարձվում է օգնականին՝ դիմումում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու եղանակով:

24. Փաստաբանի օգնականները յուրաքանչյուր ամսվա համար ամսական վճարների վճարումը կատարում են մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15 (տասնհինգը):

25. Այն դեպքում, երբ փաստաբանի օգնականի մոտ առաջ է գալիս ոչ լրիվ ամսվա համար վճարելու հարց, ապա համապատասխան ոչ լրիվ ամսվա համար վճարումը կատարվում է հետևյալ կերպ՝ եթե փաստաբանի օգնականի արտոնագիրը գործել է տվյալ ամսվա տասնհինգ օրերից ավելի ժամանակահատվածում, ապա վճարվում է ամբողջ ամսվա գումարը, իսկ եթե՝ ոչ, ապա այդ ամսվա համար գումար չի վճարվում:

VI. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

26. Պալատի նախագահի որոշմամբ անդամավճարի վճարումից լրիվ կամ մասնակի կարող է ազատվել կին փաստաբանը՝

1) հղիության երեսուն շաբաթից սկսած մինչև երեխայի ծնունդը՝ անդամավճարի լրիվ մասով (երեխայի ծննդյան օրը համարվելու է հղիության 40-րդ շաբաթվա վերջին օրը՝ մինչև ծննդյան փաստաթղթի ստացման հիմքով վերահաշվարկը).

2) երեխայի ծննդյան փաստը հաստատելուց հետո մինչև երեխայի մեկ տարեկանը՝ անդամավճարի լրիվ մասով,

3) երեխայի մեկ տարեկանից մինչև երեք տարեկանը՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարվում է անդամավճարի 2/5-րդ մասը):

Սույն կետի 1-ին ենթակետի նշված արտոնությունից օգտվելու համար փաստաբանը պետք է ներկայացնի դիմում, որին պետք է կցված լինի առնվազն երեսուն շաբաթական հղիության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ:

Սույն կետի 2-րդ և/կամ 3-րդ ենթակետերում նշված արտոնություններից օգտվելու համար փաստաբանը պետք է երեխայի ծննդյան օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում Պալատին առձեռն, փոստով կամ էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնի ծննդյան փաստաթղթի պատճենը:

Փաստաբանի նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունը տրամադրվում է դիմումի օրվանից հետո ընկած համապատասխան

ժամանակահատվածի համար, եթե փաստաբանն անդամավճարի պարտք չունի:

Այն դեպքում, երբ փաստաբանը ներկայացրել է սույն կետի 1-ին ենթակետում նշված արտոնությունից օգտվելու վերաբերյալ դիմումը, ապա փաստաբանի նկատմամբ այդ դիմումի հիման վրա կիրառվելու է նաև սույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետում նշված արտոնությունն՝ առանց լրացուցիչ դիմումի, հետևյալ կարգով՝ երեխայի ծննդյան օրը համարվելու է հղիության 40-րդ շաբաթվա վերջին օրը՝ մինչև ծննդյան փաստաթղթի ստացման հիմքով վերահաշվարկը: Սույն պարբերության մեջ նշված ժամկետում (հղիության 40 շաբաթ գումարած երեք ամիս) ծննդյան փաստաթուղթը չներկայացնելու դեպքում փաստաբանի նկատմամբ չեն կիրառվում սույն կետի 2-րդ և 3-րդ կետերի արտոնությունները (եթե ներկայացրել է երեխայի ծննդյան ժամանակ դիմում, ոչ թե նախապես):

Փաստաբանի կողմից 1-ին ենթակետի արտոնությունից օգտվելու համար համապատասխան դիմում ներկայացրած չլինելու կամ 2-րդ և 3-րդ ենթակետում նշված արտոնություններից օգտվելու համար համապատասխան հիմքը սահմանված ժամկետում Պալատ ներկայացված չլինելու դեպքում փաստաբանի կողմից ծննդյան փաստաթղթի պատճենը ներկայացնելու դեպքում արտոնությունը կարող է տրվել միայն նոր դիմումի հիման վրա՝ դիմումին հաջորդող ժամանակահատվածի համար՝ դիմումի օրվա դրությամբ անդամավճարի պարտք չունենալու դեպքում:

Բացառիկ դեպքերում Պալատի նախագահը կարող է սույն կետում նշված արտոնությունը կիրառել, եթե փաստաբանն ունի անդամավճարի պարտք:

27. Պալատի խորհրդի որոշմամբ փաստաբանին կարող են տրամադրվել հետևյալ արտոնությունները՝

1) ծանր հիվանդություն ունեցող փաստաբանին՝ անդամավճարի պարտքի զիջում (ներում) և/կամ ամենամսյա անդամավճարից լրիվ մասով ազատում հիվանդության տևողության ժամանակահատվածով՝ դիմում և առողջական վիճակը հավաստող համապատասխան բժշկական փաստաթղթեր ներկայացնելու դեպքում.

2) երկրորդ խմբի հաշմանդամին՝ մինչև հաշմանդամության փաստաթղթում նշված ժամկետի ավարտը՝ անդամավճարի 3/5-րդ մասով (վճարվում է անդամավճարի 2/5-րդ մասը)՝ դիմում և հաշմանդամության խումբը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում: Սույն ենթակետում նշված դեպքում փաստաբանի նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունը տրամադրվում է դիմումի օրվանից հետո ընկած համապատասխան ժամանակահատվածի համար, եթե փաստաբանն անդամավճարի պարտք չունի:

3) ըստ Պալատում առկա տվյալների ռազմական դրության պայմաններում անմիջականորեն ռազմական գործողությունների իրականացման վայրում մշտապես բնակվող (հաշվառված) փաստաբաններին ամենամսյա անդամավճարից լրիվ մասով ազատում՝ Պալատի խորհրդի որոշմամբ սահմանված ժամանակահատվածով:

28. Պալատի խորհրդի առանձին որոշման հիման վրա անդամավճարի ընթացիկ վճարումից լրիվ մասով ազատվում են այն փաստաբանները, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով

ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների՝ ռազմական գործողությունների ժամանակահատվածով:

29. Պալատի խորհրդի առանձին որոշման հիման վրա զիջվում (ներվում) է այն փաստաբանների անդամավճարի պարտքը, ովքեր ռազմական դրության պայմաններում պարտադիր կամ կամավոր կարգով մասնակցել են զորահավաքի և ռազմական գործողությունների: Նշված որոշման առկայությունը փաստաբանին պատասխանատվության չենթարկելու հիմք է, եթե վերջինիս նկատմամբ առկա է անդամավճար չվճարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթ: Փաստաբանների կողմից զորահավաքի և ռազմական գործողությունների մասնակցության փաստը ստուգվում է ֆինանսական տնօրենի կողմից, որի արդյունքում տրամադրվում է տեղեկանք:

30. Պալատի խորհրդի որոշմամբ զիջվում (ներվում) է Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը կամ Արցախյան պատերազմին մասնակցած և դրա հետևանքով զոհված (մահացած) զինծառայողի (կամավորի) ընտանիքի անդամ փաստաբանը: Սույն կետում նշված փաստաբանի ազգակցական կապի վերաբերյալ ուսումնասիրությունն իրականացնում և տեղեկանքը տրամադրում է Պալատի աշխատակազմի ղեկավարը: Սույն կետում նշված փաստաբանի նկատմամբ անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական վարույթ հարուցված լինելու դեպքում գործում է Կարգի 35-րդ կետով սահմանված կարգավորումը:

31. Պալատի խորհուրդը կարող է առանձին որոշմամբ անդամավճարի արտոնություններ սահմանել փաստաբանների առանձին խմբերի համար՝ կապված փաստաբանի տարիքի, կարգավիճակի կամ այլ հատկանիշի հետ:

32. Կարգի 29-րդ և 30-րդ կետերի արտոնություններից կարող է օգտվել նաև փաստաբանի օգնականը:

33. Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել, եթե անդամավճարի պարտքը գերազանցել է 15.000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամը, բացառությամբ այն դեպքի, երբ փաստաբանն առնվազն մեկ անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու հիմքով (այս պարագայում կարգապահական վարույթ կարող է հարուցվել հերթական անդամավճարը չվճարելու դեպքում):

Փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը:

Սույն կետը տարածվում է նաև փաստաբանի օգնականների նկատմամբ:

34. Առաջին անգամ անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում կարգապահական վարույթը ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց

հետո պարտքի մարման հիմքով, բացառությամբ այն դեպքի, երբ անդամավճարի պարտքի մարման հիմքով նախորդ կարճված վարույթի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո անցել է երեք տարի:

Սույն կետը տարածվում է նաև փաստաբանի օգնականների վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
13.01.2023թ. թիվ 2/6-Լ որոշման

Պալատի խորհրդի նախագահ՝

Սիմոն Բաբայան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՑԱՆԿ

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների

Արագածոտն	
Համայնքը	**Բնակավայրը**
Թլիկ	գ. Թլիկ
Գետափ	գ. Գետափ

Արարատ	
Համայնքը	**Բնակավայրը**
Երասխ	գ. Երասխ
Պարույր Սևակ	գ. Պարույր Սևակ (Տիգրանաշեն թաղամասով)
Արմաշ	գ. Արմաշ
Զանգակատուն	գ. Զանգակատուն
Ռանչպար	գ. Ռանչպար
Լուսառատ	գ. Լուսառատ
Ուրցալանջ	գ. Ուրցալանջ
Վարդաշատ	գ. Վարդաշատ
Եղեգնավան	գ. Եղեգնավան

Արմավիր	
Համայնքը	**Բնակավայրը**
Փշատավան	գ. Փշատավան
Բագարան	գ. Բագարան
Երվանդաշատ	գ. Երվանդաշատ
Մարգարա	գ. Մարգարա
Բերքաշատ	գ. Բերքաշատ
Արագափ	գ. Արագափ
Արաքս (Էջմիածնի շրջ.)	գ. Արաքս
Ջանֆիդա	գ. Ջանֆիդա

Գեղարքունիք	
Համայնքը	**Բնակավայրը**
Արծվաշեն	գ. Արծվաշեն
Վահան	գ. Վահան
Թթուջուր	գ. Թթուջուր
Արտանիշ	գ. Արտանիշ
Զիլ	գ. Զիլ
Ճամբարակ	քաղ. Ճամբարակ
Կուտական	գ. Կուտական
Սոթք	գ. Սոթք
Վերին Շորժա	գ. Վերին Շորժա
Ներքին Շորժա	գ. Ներքին Շորժա
Ծափաթաղ	գ. Ծափաթա
Փամբակ	գ. Փամբակ
Դարանակ	գ. Դարանակ
Դեղամասար	գ. Դեղամասար
Ավազան	գ. Ավազան
Արփունք	գ. Արփունք
Վարդենիս	քաղ. Վարդենիս
Նորաբակ	գ. Նորաբակ
Կութ	գ. Կութ
Արեգունի	գ. Արեգունի
Կախակն	գ. Կախակն
Տրետուք	գ. Տրետուք
Շատվան	գ. Շատվան

Լոռի	
Համայնքը	**Բնակավայրը**
Զիլիզա	գ. Զիլիզա
Պաղաղբյուր	գ. Պաղաղբյուր
Ձորամուտ	գ. Դոգավան
Ապավեն	գ. Ապավեն
Արծնի	գ. Արծնի

Շիրակ	
Համայնքը	**Բնակավայրը**
Աղին	գ. Աղին
Հայկաձոր	գ. Հայկաձոր
Անի պեմզա	գ. Անի պեմզա
Բագրավան	գ. Բագրավան (գ. Խարկով)
Սարագյուղ	գ. Սարագյուղ
Ձորակերտ	գ. Ձորակերտ (գ. Դարիկ)
Ձարիշատ	գ. Ձարիշատ (գ. Երիզակ)
Դտաշեն	գ. Դտաշեն (գ. Կամխուտ)
Մեղրաշատ	գ. Մեղրաշատ
Ձրափի	գ. Ձրափի
Բայան դուր	գ. Բայանդուր

Երազգավորս	գ. Երազգավորս
Շիրակավան	գ. Շիրակավան
Իսահակյան	գ. Իսահակյան
Լուսաղբյուր	գ. Լուսաղբյուր

Սյունիք	
Համայնքը	**Բնակավայրը**
Շաղատ	գ. Շաղատ
Մուցք	գ. Մուցք
Բարձրավան	գ. Բարձրավան
Խնածուսխ	գ. Խնածախ
Խնձորեսկ	գ. Խնձորեսկ
Խոզնավար	գ. Խոզնավար
Կոռնիձոր	գ. Կոռնիձոր
Հարթաշեն	գ. Հարթաշեն
Վաղատուր	գ. Վաղատուր
Ներքին Խնձորեսկ	գ. Ներքին Խնձորեսկ
Տեղ	գ. Տեղ
Շուռնուխ	գ. Շուռնուխ (գ. Աղբուլլաղ, գ. Ձորակ, գ. Վանանդ)
Արավուս	գ. Արավուս
Քարսուհունջ	գ. Քարահունջ
Քարաշեն	գ. Քարաշեն
Որոտան (Գորիսի շրջ.)	գ. Որոտան
Գորիս	քաղ. Գորիս
Կաղնուտ	գ. Կաղնուտ
Ուժանիս	գ. Ուժանիս
Եղվարդ	գ. Եղվարդ
Ագարակ	գ. Ագարակ
Սյունիք	գ. Սյունիք (գ. Գիցմայրի) գ. Խորձոր, գ. Սզնակ)
Գեղանուշ	գ. Գեղանուշ (գ. Գոմարան)
Ճակատեն	գ. Ճակատեն
Սրաշեն	գ. Սրաշեն
Արծվանիկ	գ. Արծվանիկ
Վար դա վանք	գ. Վար դա վանք
Շիկահող	գ. Շիկահող
Ծավ	գ. Ծավ (գ. Շիշկերտ)
Ներքին Հանդ	գ. Ներքին Հանդ
Խդրանց	գ. Խդրանց
Տանձ ավեր	գ. Տանձավեր
Աղվանի	գ. Աղվանի
Գավիթ Բեկ	գ. Գավիթ Բեկ
Վերին Խոտանան	գ. Վերին Խոտանան
Քաջարան	քաղ. Քաջարան
Քաջարան	գ. Քաջարան
Ալվանք	գ. Ալվանք
Լեհվազ	գ. Լեհվազ

Լիճք	գ. Լիճք
Կարճևան	գ. Կարճևան
Կուրիս	գ. Կուրիս
Նռնաձոր	գ. Նռնաձոր
Շվանիձոր	գ. Շվանիձոր
Վարդանիձոր	գ. Վարդանիձոր (գ. Այգեձոր, գ. Թխկուտ)
Մեղրի	քաղ. Մեղրի
Ագարակ	քաղ. Ագարակ
Վահրավար	գ. Վահրավար
Տուսշտուն	գ. Տուսշտուն
Գուդեմնիս	գ. Գուդեմնիս
Խոտ	գ. Խոտ
Շինուհայր	գ. Շինուհայր
Եղեգ	գ. Եղեգ
Սևաքար	գ. Սևաքար
Չափեի	գ. Չափեի
Աճ ան ան	գ. Աճ ան ան
Լեռնաձոր	գ. Լեռնաձոր
Նոր Աստղաբերդ	գ. Նոր Աստղաբերդ (գ. Աջաբաջ, գ. Գետիշեն, գ. Ոչեթի)
Գեղի	գ. Վերին Գեղավանք, գ. Քարուտ)
Քյուրուտ	գ. Քյուրոտ (գ. Քիրս)
Սալվարդ	գ. Սալվարդ
Թասիկ	գ. Թասիկ
Թանահատ	գ. Թանահատ
Արևիս	գ. Արևիս
Նժդեհ	գ. Նժդեհ (գ. Յղունի)
Կապան	քաղ. Կապան

Վայոց ձոր	
Համայնքը	**Բնակավայրը**
Բարձրունի	գ. Բարձրունի
Խնձորուտ	գ. Խնձորուտ
Նոր Ազնաբերդ	գ. Նոր Ազնաբերդ
Սերս	գ. Սերս
Խաչիկ	գ. Խաչիկ
Ար են ի	գ. Ար են ի (գ. Ամա ղու)
Մարտիրոս	գ. Մարտիրոս
Գոմք	գ. Գոմք (գ. Կապույտ)
Ելփին	գ. Ելփին
Չիվա	գ. Չիվա
Գինդ	գ. Գինդ
Գնիշիկ	գ. Գնիշիկ

Տավուշ	
Համայնքը	**Բնակավայրը**
Բեր դա վան	գ. Բերդավան
Կողբ	գ. Կողբ
Նոյեմբերյան	քաղ. Նոյեմբերյան
Դովեղ	գ. Դովեղ
Բարեկամավան	գ. Բարեկամավան
Կոթի	գ. Կոթի
Բաղանիս	գ. Բաղանիս
Ոսկեպար	գ. Ոսկեպար
Ոսկևան	գ. Ոսկևան
Զուջևան	գ. Զուջևան
Կիրանց	գ. Կիրանց
Այգեհովիտ	գ. Այգեհավիտ (գ. Կայան)
Ծաղկավան (Իջևանի շրջ.)	գ. Ծաղկավան
Բերքաբեր	գ. Բերքաբեր
Աչուջուր	գ. Աչաջուր
Վազաշեն	գ. Վազաշեն
Դի տա վան	գ. Դի տա վան
Սարիգուուո	գ. Սարիգուր
Սևքար	գ. Սևքար
Բերդ	քաղ. Բերդ
Այգեձոր	գ. Այգեձոր
Սկգեպար	գ. Այգեպար
Արծվաբերդ	գ. Արծվաբերդ
Տավուշ	գ. Տավուշ
Ծաղկավան (Տաուշի շրջ.)	գ. Ծաղկավան
Մոսեսգեղ	գ. Մոսեսգեղ
Նավուր	գ. Նավուր
Ներքին Կարմիր աղբյուր	գ. Ներքին Կարմիր աղբյուր
Նորաշեն	գ. Նորաշեն
Չինարի	գ. Չինարի
Չինչին	գ. Չինփն
Չորաթան	գ. Չորաթան
Պառավաքար	գ. Պառավաքար
Վարագավան	գ. Վարագավան
Վերին Կարմիր աղբյուր	գ. Վերին Կարմիր աղբյուր
Դեղձ ավան	գ. Դեղձ ավան
Աճուսրկուուո	գ. Աճարկուտ
Ակնաղբյուր	գ. Ակնաղբյուր
Աուսաձոր	գ. Աուսաձոր
Խաշթառակ	գ. Խաշթառակ
Ազատամուտ	գ. Ազատամուտ
Աուսահովիտ	գ. Աուսահովիտ
Պտղավան	գ. Պ տղա վան
Բագրատաշեն	գ. Բագրատաշեն
Դեբեդավան	գ. Դեբեդավան
Իծաքար	գ. Իծաքար